



## ԲԱՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

2011թ. սեպտեմբեր

Որպես Բաց կառավարման գործընկերության անդամներ, ովքեր հավատարիմ են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայում և կիրառելի միջազգային այլ փաստաթղթերում տեղ գտած մարդու իրավունքների և լավ կառավարմանը վերաբերող դրույթներին.

**Մենք ընդունում ենք**, որ մարդիկ ամբողջ աշխարհում պահանջում են ավելի բաց կառավարում: Նրանք կոչ են անում հանրային գործերում ապահովել ավելի լայն քաղաքացիական մասնակցություն և ուղիներ են փնտրում իրենց կառավարություններն առավել թափանցիկ, արձագանքող, հաշվետու և արդյունավետ դարձնելու համար:

**Մենք գիտակցում ենք**, որ երկրները՝ բաց կառավարում խթանելու իրենց ջանքերում գտնվում են տարբեր փուլերում, և որ մեզանից յուրաքանչյուրը որդեգրում է սեփական ազգային առաջնահերթություններին, պայմաններին և քաղաքացիների իղձերին համահունչ մոտեցումներ:

**Մենք պատրավորվում ենք** օգտագործել այս հնարավորությունը և ամրապնդել մեր՝ թափանցիկության խթանման, կոռուպցիայի դեմ պայքարի, քաղաքացիների իշխանագործման, նոր տեխնոլոգիաների ներուժի ներդրման միջոցով կառավարումն ավելի արդյունավետ և հաշվետու դարձնելու հանձնառությունները:

**Մենք պաշտպանում ենք** հասարակության հետ մեր ներգրավվածության գործում բաց լինելու արժեքը, որպեսզի բարելավենք ծառայությունները, կառավարենք հանրային ռեսուրսները, նորարարություններ ներդնենք և ստեղծենք առավել ապահով համայնքներ: Մենք ընդունում ենք թափանցիկության և բաց կառավարման սկզբունքները, ձգտելով հասնել առավել բարեկեցության, բարգավաճման ու մարդկային արժանապատվության՝ ինչպես մեր երկրներում, այնպես էլ ավելի փոխկապակցված դարձող աշխարհում:

Միասին մենք հռչակում ենք մեր հանձնառությունները.

### **Ընդլայնել կառավարության գործունեության մասին տեղեկատվության հասանելիությունը**

Կառավարությունները ժողովրդի անունից են կուտակում և պահում տեղեկատվություն, և քաղաքացիներն իրավունք ունեն կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալ: Մենք հանձնառու ենք առավել հասանելի դարձնել տեղեկատվությունը կառավարության ցանկացած օղակի գործունեության վերաբերյալ: Մենք պարտավորվում ենք ընդլայնել մեր ջանքերը՝ համակարգված կերպով հավաքագրել և հրապարակել հիմնական հանրային ծառայությունների և գործունեության հետ կապված կառավարության ծախսերի ու կատարողականի վերաբերյալ տվյալները: Մենք պարտավորվում ենք ակտիվորեն, պատշաճ ժամկետներում ներկայացնել բովանդակային տեղեկատվություն, այդ թվում՝ չմշակված տվյալներ այնպիսի ձևաչափերով, որոնք թույլ կտան հասարակությանը հեշտությամբ գտնել, հասկանալ, օգտագործել և վերագործարկել դրանք: Մենք հանձնառու ենք հասանելիության արդյունավետ միջոցներ տրամադրել այն դեպքերում, երբ տեղեկատվությունը կամ համապատասխան գրանցումներն անտեղի կերպով անհասանելի են դարձել, ներառյալ տեղեկատվության պահանջի գործընթացի արդյունավետ վերահսկողության միջոցով: Մենք գիտակցում ենք բաց չափորոշիչների կարևորությունը՝ քաղաքացիական հասարակության համար հանրային տեղեկատվության հասանելիությունը խթանելու, ինչպես նաև կառավարական տեղեկատվական համակարգերի համատեղելիությունն ապահովելու համար: Մենք պարտավորվում ենք հետևել հասարակության արձագանքին՝ նրա համար առավել արժեքավոր տեղեկատվությունը զատելու համար, և խոստանում ենք այդ արձագանքն առավելագույնս հաշվի առնել:

### **Աջակցել քաղաքացիական մասնակցությանը**

Մենք արժևորում ենք բոլոր քաղաքացիների՝ հավասարության սկզբունքով և առանց խտրականության մասնակցությունը հասարակական որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացներում: Հանրության ներգրավվածությունը, ներառյալ կանանց լիարժեք մասնակցությունը, բարձրացնում է կառավարությունների արդյունավետությունը, որոնք շահում են մարդկանց գիտելիքներից, գաղափարներից և վերահսկողություն իրականացնելու ունակությունից: Մենք հանձնառու ենք ավելի թափանցիկ դարձնել քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացը, ստեղծել և օգտագործել ուղիներ հանրային արձագանք ստանալու համար և խորացնել հասարակական մասնակցությունը կառավարության գործունեության մշակման, դիտարկման և գնահատման գործում: Մենք պարտավորվում ենք պաշտպանել շահույթ չհետապնդող կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության գործունեությունը՝ ազատ արտահայտվելու, միավորվելու և կարծիք հայտնելու հետ կապված մեր հանձնառություններին համապատասխան: Մենք պարտավորվում ենք ստեղծել կառավարության, քաղաքացիական

հասարակության և գործարար դաշտի միջև առավել ընդգրկուն համագործակցության մեխանիզմներ:

**Ներդնել մեր ադմինիստրացիաներում մասնագիտական էթիկայի բարձրագույն չափորոշիչներ**  
Հաշվետու կառավարությունը պետական պաշտոնյաների էթիկայի բարձր չափանիշների և պատշաճ վարվեցողության կանոնների կարիք ունի: Մենք պարտավորվում ենք ունենալ հակակոռուպցիոն հետևողական քաղաքականություն, մեխանիզմներ և կիրառելիություն, թափանցիկություն ապահովել հանրային ֆինանսների կառավարման և պետական գնումների ասպարեզում, ամրապնդել օրենքի գերակայությունը: Մենք պարտավորվում ենք պահպանել կամ ստեղծել իրավական դաշտ, որպեսզի հանրությանը հասանելի դառնա պետական բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների և ունեցվածքի մասին տեղեկատվությունը: Մենք պարտավորվում ենք ընդունել և կիրառել օրենքներ, որոնք կպաշտպանեն պրոբլեմներն ահագանգողներին: Մենք պարտավորվում ենք հասարակությանը հասանելի դարձնել տեղեկատվություն կոռուպցիայի կանխարգելման, հակակոռուպցիոն հարկադիր գործողություններով զբաղվող մարմինների գործունեության և արդյունավետության, այդ մարմիններին դիմելու ընթացակարգերի վերաբերյալ, մինևույն ժամանակ հարգելով հատուկ բնույթի իրավապահական տեղեկատվության գաղտնիությունը: Մենք պարտավորվում ենք ամրապնդել մասնավոր և պետական հատվածներում կաշառակերության ու կոռուպցիայի այլ տեսակների կանխարգելման միջոցառումները, ինչպես նաև ապահովել տեղեկատվության և փորձի փոխանակումը:

**Ընդարձակել նոր տեխնոլոգիաների հասանելիությունը բաց և հաշվետու լինելու համար**

Նոր տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում տեղեկատվության փոխանակման, հանրային մասնակցության և համագործակցության համար: Մենք մտադիր ենք կիրառել այդ տեխնոլոգիաները՝ տեղեկատվության ավելի մեծ ծավալ հրապարակ հանելու համար, այնպես, որ մարդիկ կարողանան հասկանալ, թե ի՞նչ է անում իրենց կառավարությունը և կարողանան ազդել կայացվելիք որոշումների վրա: Ծառայությունների մատուցման, հանրությանը ներգրավելու, մտքերի և տեղեկատվության փոխանակման նպատակով մենք հանձ ենք առնում զարգացնել հասանելի և անվտանգ առցանց կարողություններ: Մենք ընդունում ենք, որ տեխնոլոգիաների արդար և մատչելի հասանելիությունը մարտահրավեր է և պատրավորվում ենք ուղիներ որոնել առցանց և շարժական կապուղիներն ընդլայնելու համար՝ միաժամանակ գտնելով և խթանելով հանրային ներգրավվածության այլընտրանքային կարողություններ: Մենք պարտավորվում ենք ներգրավել քաղաքացիական հասարակությանը և գործարար շրջանակներին, որպեսզի որդեգրենք արդյունավետ աշխատատեղ և նորարարական մոտեցումներ, նոր տեխնոլոգիաների միջոցով իշխանագործենք մարդկանց և խթանենք կառավարության թափանցիկությունը: Մենք նաև գիտակցում ենք, որ տեխնոլոգիաների հասանելիության ընդլայնումն իր հերթին պահանջում է աջակցություն կառավարություններին և քաղաքացիներին դրանց օգտագործման գործում: Մենք պարտավորվում ենք աջակցել և

զարգացնել տեխնոլոգիական նորարարությունների կիրառումը՝ ինչպես պետական պաշտոնյաների, այնպես էլ քաղաքացիների կողմից: Մենք նաև գիտակցում ենք, որ տեխնոլոգիան կարող է միայն լրացնել՝ ոչ փոխարինել մաքուր, կիրառելի և օգտակար տեղեկատվությունը:

**Մենք ընդունում ենք**, որ բաց կառավարումը գործընթաց է, որը պահանջում է տևական և կայուն հանձնառություններ: Մենք պարտավորվում ենք հրապարակայնորեն հաշվետու լինել այդ սկզբունքների իրագործմանն ուղղված քայլերի մասին, խորհրդակցել հանրության հետ դրանց իրականացման հարցում, թարմացնել մեր հանձնառությունները՝ նոր մարտահրավերներին և հնարավորություններին համահունչ:

**Մենք խոստանում ենք** օրինակ ծառայել և աջակցել այլ երկրներում բաց կառավարման ամրապնդմանը՝ փորձի ու նվաճումների փոխանակման, սույն հռչակագրով ստանձնած հանձնառությունների՝ ոչ պարտադիր, կամավոր հիմունքներով իրականացման ճանապարհով: Մեր նպատակն է նպաստել նորարարությանը, առաջընթաց խթանել, և ոչ թե սահմանել չափորոշիչներ, որոնք կվերածվեն համագործակցության կամ օգնության նախապայմանի կամ երկրների աստիճանակարգման միջոցի: Մենք կարևորում ենք համընդգրկուն մոտեցման բացության խթանումը և ինստիտուցիոնալ կարողություններին աջակցելու համար տեխնիկական օժանդակության հասանելիությունը:

**Մենք պարտավորվում ենք** մեր միջազգային շփումներում պաշտպանել այս սկզբունքները և նպաստել բաց կառավարման գլոբալ մշակույթի կայացմանը. մշակույթ, որն իշխանագործում է քաղաքացիներին, բավարարում նրանց կարիքները և խթանում 21-րդ դարին վայել բաց և մասնակցություն ապահովող կառավարման իդեալները: